Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը**, **ազգանունը**, **զբաղեցրած պաշտոնը**.

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2023 թ. դեկտեմբերի 5-7-ը, Գանայի Հանրապետություն (Աքրա)

3. **Հրավիրող կողմը**

«Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինքի» (GAVI) խորհուրդ

4. **Գործուղման նպատակը** (**աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը**)

Գործուղման նպատակն էր մասնակցել «Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինքի» (GAVI) խորհրդի տարեվերջյան գագաթաժողովին: Հանդիպման շրջանակներում կարևոր որոշումներ կայացվեցին Գավիի ապագա ծրագրերի զարգացման վերաբերյալ:

5. **Քննարկված թեմաները**

Միջոցառման շրջանակներում հանդես եկա ելույթով՝ անդրադարձ անելով Հայաստանի առողջապահության ոլորտի առաջնահերթություններին, այդ թվում՝ առողջության առաջնային պահպանման օղակում կատարվող բարեփոխումներին, մասնավորապես՝ իմունիզացիայի ծրագրերին, առողջապահական համակարգի ապագա զարգացման միտումներին: Հիշյալ հարցերը քննարկվեցին Գավիի նոր ռազմավարական ժամանակահատվածի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2030 օրակարգի համատեքստում:

6. **Հանդիպումները**, **ելույթները**, **բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումները կայացել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Հանդիպումների ընթացքում առավելապես ընդգծվել է արագ փոփոխվող և անկայունության պայմաններում նոր մարտահրավերներին պատրաստականության կարևորությունը՝ հատկանշելով երկրներում պատվաստանյութերի առկայության և մատչելիության երաշխիքի կարևոր գործոնը: Անդրադարձ է արվել նաև հնարավոր համագործակցության արդի ուղղություններին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները**, **պայմանավորվածությունները**, **ստորագրված փաստաթղթերը**

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև: Միջոցառման մասնակիցները առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

8. **Առաջարկությունները**, **դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը**, **ձևը**, **ժամկետները**, **պատասխանատուները**, **ակնկալվող արդյունքները**.

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառելու: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

9. **Ստորագրությունը**, **ամսաթիվը**

2023 թ. դեկտեմբերի 12

12.12.2023

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157